

# «ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՕՐԵՆՔԸ

#### ««ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

**Հոդված 1.** «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-274-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝

«4. Եթե որակավորման ստուգում անցկացնելու մասին հայտարարություն տրվել է նոտարական տարածքի և նստավայրի նշմամբ, ապա նշանակված նոտարը կարող է տեղափոխվել այլ նոտարական տարածք՝ մարզ՝ առնվազն 3 տարի, Երևան քաղաք՝ առնվազն 5 տարի նոտարական գործունեություն իրականացնելուց հետո:»:

**Հոդված 2.** Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Նոտարի պաշտոնում նշանակումները կատարում է արդարադատության նախարարը՝ հաշվի առնելով նոտարական պալատի եզրակացությունը, որը պետք է լինի պատճառաբանված և հիմնավորված:

Նոտարի պաշտոնում նշանակում կատարելիս արդարադատության նախարարը առաջնահերթությունը տալիս է որակավորման վկայական ունեցող այն անձին, ով անցել է հստակ նոտարական տարածքի նշմամբ հայտարարված որակավորման ստուգում:

Պաշտոնում նշանակելուց հետո արդարադատության նախարարությունը նոտարին տալիս է ծառայողական վկայական:»:

**Հոդված 3.** Օրենքի 11-րդ հոդվածը՝

- լրացնել նոր 2.1-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝

«2.1. Որակավորման ստուգում անցկացնելու մասին հայտարարությունը կարող է տրվել առանց նոտարական տարածքի և նստավայրի նշման՝ բոլոր նոտարական տարածքներում թափուր հաստիքները լրացնելու համար կամ նոտարական տարածքի և նստավայրի նշմամբ՝ այդ նոտարական տարածքում առկա թափուր հաստիքները լրացնելու համար.

- լրացնել նոր 3.1-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝

«3.1.Եթե որակավորման ստուգում անցկացնելու մասին հայտարարություն տրվել է նոտարական տարածքի և նստավայրի նշմամբ, ապա որակավորման վկայական ստացած անձը հաղթող ճանաչվելու դեպքում նշանակվում է հայտարարության մեջ նշված նոտարական տարածքում և նստավայրում:»:

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից երեք ամիս հետո: